

Գեղամ Ա. Խաչատրյան
Տնտ. գիտ. թեկնածու

«Ու նիրվանայի լուսնաշխարհը սառ –
Նա էլ չի դառնա կյանքի անսահման
Օվկիանը, որ կոչվում է Մանսար...
Օ, ծանր է, օ ծանր է այնքան
Ուներիս համար բեռը հավերժի.
– Ախ, լինել թեթև, հրճոտ, հրական,
Վառվել, որպես զոհ, զոհս չմերժի
Արևը – արև, ու Ա՛գնի, ու Ռա.
Վառվել ու մարել աշխարհի վրա...»¹
Եղիշե Չարենց

ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄ

Ըստ Կենդանի բարոյագիտության ուսմունքի*

Միւսոք

Կենդանի բարոյագիտությունը (էթիկան) 20-րդ դարի ռուս ակա-
նավոր մտածողներ և արվեստագետներ **Ելենա² և Նիկոլայ Ռերիխների³**
ընտանիքի ստեղծագործական որոնումների արդյունքն է։ Կենդանի բա-
րոյագիտության գրքերը գրվել են **Ելենա Ռերիխի** կողմից, սակայն վեր-
ջինս հեղքում էր իր հեղինակությունը՝ պնդելով, թե Կենդանի բարոյա-

*Հոդվածն ընդունվել է տպագրության 12.11.2013:

1 **Եղիշե Չարենց**, «Երկեր», Եր., «Սովետական գրող» հրատ., 1983, էջ 40:

2 **Ելենա Իվանի Ռերիխը** (Շապոշնիկովան) ծնվել է 1879 թ. փետրվարի 12-ին Պետեր-
բուրգում, ճարտարապետության ակադեմիկոսի ընտանիքում։ Մոր կողմից ռուս մեծ գորա-
վար, իշխան Միխայիլ Կուտուզովի ժառանգն էր։ Հայտնի է որպես հասարակական գործիչ,
գրող, իմաստասեր։ 1901 թ. ամուսնացել է ռուս ականավոր գեղանկարիչ Նիկոլայ Ռերիխի
հետ։ Նրանք ունեցել են երկու որդի՝ Յուրի և Սվյատոսլավ Ռերիխները։

3 **Նիկոլայ Կոնստանտինի Ռերիխը** ծնվել է 1874 թ. հոկտեմբերի 9-ին Պետերբուրգում։
Ավարտել է Կուինզիի գեղարվեստի ակադեմիան և Փարիզի Կորնոնի ստուդիան։ Ն. Ռերիխը
մոտ յոթ հազար կտավների հեղինակ է։ Նրա վաղ շրջանի նկարների հիմնական թեմաներն
էին հեթանոսական Ռուսիան, ժողովրդական էպոսի կերպարները։ 1900-ական թվական-
ների կեսերից Ն. Ռերիխի կտավներում և գրական ստեղծագործություններում ավելի հա-
ճախ է հնչում Արևելքի, մասնավորապես Հնդկաստանի թեման։ Ն. Ռերիխի տաղանդը
դրսևորվել է նաև նրա թատերական-բեմադրական գործերում։ 1936 թվականից մշտապես
ապրել և աշխատել է Հնդկաստանում։ Մահացել է 1947 թ. դեկտեմբերի 13-ին։

գիտության ուսմունքը ստեղծել են մարդկության հոգևոր Ուսուցիչները, որոնց հետ նա ծանոթացել է Հնդկաստանում:

Ըստ Ելենա Ռերիխի՝ նա պայծառալսության եղանակով ուղերձներ է ստացել Մեծ հոգի Սորիայից: Դրանց գրառումների հիման վրա գրքերի շարք է հրատարակել Կենդանի բարոյագիտության ուսմունքի մասին: Ելենա Ռերիխը Նիկոլայ Ռերիխի ղեկավարությամբ ԱՄՆ-ում 1920-ական թթ. զբաղվել է մշակութային գործունեությամբ, մասնակցել է Կենտրոնական Ասիայի դժվարամատչելի և սակավ հետազոտված շրջաններով 1924-1928 թթ. Ն. Ռերիխի կազմակերպած արշավախմբին, Հնդկաստանում եղել է Հիմալայան հետազոտությունների «Ուրուսվատի» հաստատության հիմնադիրն ու պատվավոր նախագահը, Նյու Յորքում՝ **Ն. Ռերիխի թանգարանի** հիմնադիրն ու պատվավոր նախագահը: Մահացել է 1955 թ. հոկտեմբերի 5-ին Հնդկաստանում:

1920-1940-ական թվականներին Մեծ Ուսուցիչների (Սորիա, Կուտխումի, Իլարիոն) ղեկավարությամբ Ելենա Ռերիխը գրել է Կենդանի բարոյագիտության ոգեղեն իմաստասիրական ուսմունքի գրքերը: Դրանք հաստատում են համամարդկային ոգեղեն, բարոյական արժեքները և խտացնում են իրենց մեջ Արևելքի իմաստասիրական մտքի տիեզերագիտական և հոգեբանական դրույթները:

Կենդանի բարոյագիտության ուսմունքը **Արևելքի հնագույն մտքի և Արևմուտքի գիտական նվաճումների համադրություն** է և հասցեագրված է տիեզերական, բարոյագիտական, գիտական, իմաստասիրական և հոգևոր հիմնախնդիրներով հետաքրքրվող ընթերցողներին: Կենդանի բարոյագիտությունը ուսմունք է մարդու տիեզերական բնավիճության մասին: Այն իր մեջ ներդաշնակորեն միավորում է արևելյան և արևմտյան ավանդույթները, գաղտնի գիտելիքները և առաջադեմ գիտական գաղափարները:

Մակայն Կենդանի բարոյագիտությունը գաղտնի ուսմունք չէ, այլ համադրական գիտաիմաստասիրական ուսմունք տիեզերքի մասին ամբողջությամբ, նրա կազմվածքի, ծագման և բնագարգացման, տիեզերքի օրենքների, տիեզերքի զարգացման մեջ բանական ուժերի (տիեզերական բանականության) դերի, տիեզերքում մարդու դերի, տիեզերքի հետ նրա սերտ կապի, մարդու և մարդկային հասարակության բնագարգացման, կեցության բարոյական հիմքերի և ոգեղեն կատարելագործման ուղիների՝ որպես բնագարգացման անհրաժեշտ պահանջի մասին: Այսպիսով՝ Կենդանի բարոյագիտության ուսմունքը հանդես է գալիս որպես կյանքի բոլոր կողմերն ընդգրկող, կառուցողական Կյանքի ուսմունք:

Մինչև վերջերս Հայաստանում Կենդանի բարոյագիտության ուսմունքի գիտական հետազոտություններ չէին կատարվում: Խորհրդային տասնամյակների ընթացքում հայ իմաստասիրական մտքի վրա իշխած գաղափարախոսական ճնշումը թույլ չէր տալիս զբաղվել «գաղտնակրոն» համարվող ուսմունքների (էզոթերիզմ, օկուլտիզմ, թեոսոֆիա) հետ կապված գրականության ուսումնասիրությամբ: Մակայն ներկայումս հայկական ռերիխյան ընկերության կողմից թարգմանվել և հրատարակվել են

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

Ե (ժԵ) փարի, թիվ 4 (44) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

ուսմունքի բոլոր գրքերը: Կան նաև տարբեր հեղինակների՝ Ա. Կլիզովսկու⁴, Ե. Ռերիխի⁵, Ե. Բլավատսկայայի⁶, Իլյարիոն Սմերդիսի⁷, Վ. Գեյդտի⁸ և այլ գրքերի հայերեն թարգմանություններ: Հայ իրականության մեջ աստիճանաբար սկսում են նաև գիտական հետազոտություններ կատարվել Կենդանի բարոյագիտության վերաբերյալ:

1. Կենդանի բարոյագիտության հիմունքները. Ճշմարտություն

Մարդու կողմից ճշմարտության որոնումները սկսվել են նրա գոյության օրվանից ի վեր, իսկ իմաստության որոնումների պաշտոնական սկիզբը կարելի է համարել մարդկային առաջին գիտության՝ իմաստասիրության (ֆիլոսոֆիա) հայտնվելու պահը: Մեզանում իմաստության կարևորության բարձր գնահատման մասին է խոսում հայոց գրով պաշտոնապես ընդունված առաջին նախադասության բովանդակությունը՝ «Ճանաչել գիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զքանս հանձարոյ»:

Ճշմարտությունը և իմաստությունը Ռերիխների Կենդանի բարոյագիտության ուսմունքի կարևորագույն, հիմնարար հասկացություններից են: Բոլոր ժամանակներում ճշմարտությունը միշտ էլ եղել է իր տեղում, երբեք չի թաքնվել ինչ-որ անմատչելի վայրերում: Մարդուն հասանելի է ճշմարտության այնպիսի բարձրություն, որքան որ նրա ոգու ճանաչողական ընդունակությունների բարձրության մակարդակն է⁹: Բացարձակ ճշմարտության ձեռքբերումը սահմանափակված է միայն այդ ընդունակության շրջանակներով, այլապես ճշմարտությունը թաքնված կամ թաքցված չէ, այն բաց է և մատչելի, ամենուրեք է և ամեն ժամանակ: Պարզապես ճշմարտության առանձնահատկությունն այնպիսին է, որ այն չեն կարող տեսնել չնախապատրաստված գիտակցությունները: Ահա թե ինչու երբ իմաստունները անպատրաստ մարդկանցից թաքցնում են ճշմարտությունը, նրանք դա անում են ոչ թե որովհետև ափսոսում են այն: Նման մարդիկ չեն հասկանա և օգուտ չեն ստանա դրանից, իսկ վնասել իրենց և ուրիշներին կարող են: Բուդդայի ուսմունքում նույնիսկ հատուկ դրույթ կա նպատակահարմար ճշմարտության մասին, համաձայն որի՝ գոյություն

4 Տե՛ս Կլիզովսկի Ա. Ի. Վերամարմնավորման օրենքը, Եր., «Շուշան», 1994:

5 Տե՛ս Ռերիխ Ե. Ի. Արևելյան կրիպտոգրամմաներ, Եր., «Ազնի աստղ», 1996: Տե՛ս նաև՝ Երեք բանալի, Եր., Հեղինակային հրատարակություն, 2007: Տե՛ս նաև՝ Անկեղ կրակ, Եր., «Ազնի աստղ», 1997:

6 Տե՛ս Բլավատսկայա Ե. Պ. Ավետարանական էզոթերիզմ, Եր., 2000:

7 Տե՛ս Սմերդիս Իլյարիոն, Նամակ Սուրբ Հովհաննես վանքից /Իլյարիոն Սմերդիս/ Թարգմ.՝ Գ. Ա. Խաչատրյանի, Եր., Հեղինակային հրատարակություն, 2010:

8 Տե՛ս Կենդանի բարոյագիտության ուսմունքը նոր աշխարհում կնոջ առաքելության մասին, կազմ.՝ Վ. Վ. Գեյդտ, թարգմ. Գ. Ա. Խաչատրյանի, Եր., Հեղինակային հրատարակություն, 2010:

9 Տե՛ս Грани Агни Йоги, 1953, ч. I. 14. Ծանոթագրություն. այստեղ և հետագայում Կենդանի բարոյագիտությանը նվիրված գրքերին արված հղումներում նշվում է ոչ թե էջի համարը, այլ շարադրանքի հատվածի համարը, իսկ Ե. Ի. Ռերիխի նամակներին արված հղումներում նշվում է նամակի ամսաթիվը: Հղումների նման համակարգի նպատակն է ընթերցողին հնարավորություն տալ աշխատելու ուսմունքի բազմաթիվ հրատարակություններից յուրաքանչյուրի հետ:

չունի մեկընդմիջ տրված մեկ ճշմարտություն, որը կպահպաներ իր նշանակությունը յուրաքանչյուրի համար՝ ցանկացած իրավիճակում: **Ըստ այդ դրույթի՝ խոսքի նշանակությունն այն չէ, որ նկատի ունի ասողը, այլ այն ներգործությունն է, որ ունենում է խոսքը լսողի վրա:** «Անհնար է տալ մարդկանց ճշմարտությունը, քանզի չեն կարող նրանք տեղավորել այն: Նույնիսկ կարելի է ասել՝ որքան մոտ ենք ճշմարտությանը, այնքան հեռու է այն թվում մեզ: Չափազանց պարզ է այն իր վեհության մեջ»¹⁰:

Սակայն ճշմարտության կամ ճշմարտությունը իմացողների իմաստության նպատակը իրեն բացահայտելն է և իրեն մարդկության բարօրության գործին ծառայեցնելը, որպեսզի գոյի արդեն զարգացած մասը նպաստի մնացած մասի առաջընթացին: Գիտակցության զարգացման հետ ընդարձակվում է նաև «ճշմարտություն» հասկացողությունը: Ճշմարտությունը ամենից առաջ կեցության օրենքների իմացությունն է, իրականության արտացոլանքը գիտակցությունում: Ըստ Կենդանի բարոյագիտության ուսուցիչների՝ «Բարձրագույն գիտակցությունը գիտի ճշմարտությունը, և մենք պատրաստ ենք հայտնել այդ ճշմարտությունը մարդկությանը, բայց դրա համար մարդկությունը պետք է կանգնի բարձրագույն աստիճանին»¹¹:

Մեծամասնության համար դա անելն այնքան էլ դյուրին չէ: Միանգամից բոլորի առաջընթացն անհնար է, այդ պատճառով մարդկությանը ճշմարտությունը տրվել է փոքրիկ չափաբաժիններով, բուժիչ դեղամիջոցի նման, որպեսզի այն աստիճանաբար անի իր կենարար ներգործությունը, առանց վնասելու դեղի ավելցուկից. «Միշտ, բոլոր ժամանակներում աշխարհին տրվել է միայն ճշմարտության այն մասը, որը մարդկությունը կարող էր ընկալել: Բայց անհնար է որևէ մեկին բռնությամբ սովորեցնել ճշմարտությունը կամ փոխանցել այն: Յուրաքանչյուրը պետք է ինքը գտնի ճշմարտությունը: Ամենը, ինչ կարելի է անել, դա լոկ ուղղությունը ցույց տալն է»¹²:

Մարդկության պատմության մեջ միշտ եղել են ընդլայնված գիտակցությամբ փոքրաթիվ մարդիկ, որոնք իրենց ուղին ավելի շուտ սկսելու կամ ավելի մեծ ջանքերի գործադրման շնորհիվ առաջ են անցել մեծամասնությունից և ստանձնել են նրա առաջնորդի դերը. «Հիշենք այն յոթ մեծ ոգիների կամ ուսուցիչների մասին... Հենց նրանց գիտակցությունն էր սնում մարդկության գիտակցությունը միասնական ճշմարտությամբ, որը նրանք բերում էին ժամանակին համապատասխանող զանազան իմաստասիրությունների և կրոնների հագուստներով»¹³:

Մեծ ոգիները ուսուցանել են ոչ միայն ճշմարտություն փնտրող առանձին մարդկանց, այլև ամբողջ ժողովուրդների. «Ճշմարտությունը միակն է, և նախահիմքերը նրա ուսուցանվել են մեծ Ավետաբերների կողմից տարբեր ժողովուրդներին տարբեր դարերում: Բայց միասնական լինելով հիմքերում, ճշմարտությունն իր բազմակողմանիության և խորքերի մեջ

10 Письма Елены Рерих, 1929–1938. В 2 т. Том 2. Указ. соч. Письмо от 07.01.37.

11 Ազնի Յոգա: Անսահմանություն. մաս I-ին, Եր., «Զանգակ-97», 2008, հատված 201:

12 Письма Елены Рерих, 1932 – 1955. (т.3) – Новосибирск: Вико, 1993. – 512 с. Письмо от 20.04.36.

13 Письма Елены Рерих, 1929–1938. В 2 т. Том 1. – Минск, Белорусский фонд Рерихов, ПРАМЕБ, 1992. – 444 с. Письмо от 06.12.34.

անսահման է: Այդ պատճառով անսահման գիտելիքի ավաստի զանազան կողմերը տրվում են մարդկությանը նրա բարձրագույն ընդունակությունների բացահայտման կամ իմացության ընդհանուր մակարդակի բարձրացման չափով»¹⁴:

Այդպիսի ուսուցիչներ ժամանակին ունեցել են գրեթե բոլոր ժողովուրդները: Դրանցից նրանք, ովքեր լավ են սերտել իրենց ստացած դասերը և յուրացրել ուսուցիչների իմաստությունը, դարձել են իմաստուն և օգտվել իրենց գիտելիքից ի բարօրություն իրենց, իսկ որոնք որ մերժել են այն, նրանք իրենց ձակատագրերի մեջ հիմքն են դրել ողբերգությունների: «Շերտավորումների որակները ներկայացնում են ժողովուրդներին շրջապատող ոլորտների կերպարները: Ժողովրդական ոգին միշտ նախասահմանում է ապագայի էությունը: Յուրաքանչյուր ժողովրդի շուրջ թրթռում է հետևանքների ձակատագիրը, այդ պատճառով են մարդիկ այդպես ձգտում դեպի ճշմարտության հիմունքները, բայց միայն ընտրյալներն են գնում ճշմարտության ուղիով: Ամենաշատը խեղաթյուրվում է ճշմարտության հասկացությունը: Ահա թե ինչու՝ երբ Մենք ասում ենք ճշմարտություն, Մենք կոչ ենք անում նուրբ եռանդուժերի տիրապետմանը և դեպի տիեզերական Մագնիսը: Կարելի է որոշել յուրաքանչյուր ժողովրդական թրթռոց: Ամենահավատարիմ ցուցանիշը ժողովրդական միտքն է: Հաստատված նպատակադրվածությունը տալիս է իմացության բանալին: Այդպես ժողովրդական ոգին կազմում է իր աստիճանները»¹⁵:

Ինչ է ճշմարտությունը: Գոյություն ունի կարճ և տարողունակ պատասխան այդ հարցին. «Ճշմարտությունը աներևակայելի խորության անվերջանալի լույս է»¹⁶: Որտեղ է այն գտնվում. «Ճշմարտությունը գրված է անսահմանության մեջ, բայց ամեն օր այն իր հավերժության նոր տառ կբացի»¹⁷: Իսկ մարդու մեջ որտեղ է այն գտնվում: Քանի որ բնությունը անսահմանության հետ մարդու կապը հաստատել է սրտի միջոցով, ճշմարտությունն ապրում է սրտում: Մարդկության ոգեղեն ուսուցիչները միշտ ուշադրություն են դարձրել այն բանի վրա, որ մարդը մարմնից և ուղեղից բացի ևս մեկ կարևոր գործիք ունի աշխարհի ճանաչման համար. դա **սիրտն** է կամ **հոգին**: Եվ միայն մարմնական, մտավոր և ոգեղեն գիտելիքների միավորումով կարելի է ճանաչել իմաստությունը և ճշմարտությունը:

Ճշմարտությունը տարբեր կողմեր ունի: Կենդանի բարոյագիտության ուսմունքը ճշմարտության հաստատման ուղիներից մեկն է համարում **գեղեցկությունը**. «Ճշմարտությունը գեղեցկության մեջ է: Տիեզերքը զարգացումը հաստատում է այդ բանաձևի վրա: Տիեզերքը ուղղում է աշխարհին դեպի գեղեցկության տիրապետումը»¹⁸: Ճշմարտության հասկացությունը նույնական է բարության, գեղեցկության և սիրո հասկացությունների հետ: Նրանց միասնությունը մարդկության ոգեղեն մշակույթի հիմքն է կազմում: Այդ հատկությունները դրսևորվում են մարդու մեջ որ-

14 Письма Елены Рерих, 1932 – 1955. (т.3). Указ. соч. Письмо от 07.05.39.

15 Ագնի Յոգա: Անսահմանություն. մաս 2-րդ., Եր., «Ջանգալ-97», 2008, հատված 727:

16 Рерих Е.И. У порога Нового Мира. – М.: МЦР, 2000, с. 243.

17 Ագնի Յոգա: Եղբայրություն, մաս 1-ին, Եր., «Ջանգալ-97», 2007, հատված 283:

18 Ագնի Յոգա: Անսահմանություն. մաս 1-ին, նշվ. աշխ., հատված 178:

պէս մշտական ձգտում դէպի համընդհանուր ներդաշնակությունը, գեղեցկությունը, ճշմարտությունը և արդարությունը. «Բարի, սիրող մարդը ամբողջական, ոգեպէս հասուն մարդ է: Բնածին իմաստությունը նրանում զուգակցվում է հավասարակշռվածության հետ: Նա անկախ է, մեծահոգի, բաց, անկեղծ, ճշտախոս: Նրա արարքները գեղեցիկ են: Նա լավատես է, կենսախիսիդ, անվախ, ներդաշնակ, գթասիրտ: Նա ոգու մարտիկ է»¹⁹:

Կյանքը երկրային գործերի փորձառության միջոցով ոգու կատարելագործման մեծ դպրոց է: **Ամբողջ կյանքում մարդը սովորում է լուծել երկրայինի և բարձրագույնի համատեղման համամարդկային հիմնախնդիրը:** Այդ հակադրությունների միջև ոսկե միջինը գտնելը նշանակում է տիեզերական ներդաշնակություն գտնել սրտում, ոգու հավասարակշռություն ձեռք բերել: Այդ հավասարակշռությունը հաստատվում է սիրո իմաստությամբ, որը բարձրացնում է մարդուն առօրեական գիտակցությունից վեր: **Սերը՝** որպէս իմաստություն, համադրում է իր մեջ բարությունը, ճշմարտությունը և գեղեցկությունը: Մարդը իմաստուն է այնքանով, որքանով կարողանում է սիրել, բարություն անել իր կյանքում, ընդունակ է հասկանալու գեղեցկությունը իր բոլոր դրսևորումներում և սովորել է վերարտադրել այն կյանքում: Դա մտքի վեհության գեղեցկությունն է, մարդկային փոխհարաբերությունների գեղեցկությունը, աշխատանքում վարպետության գեղեցկությունը, լույսին ծառայելու սխրանքի գեղեցկությունը. «Սիրել մարդկանց նշանակում է իմանալ մարդկային բնությունն իր բարձր և ցածր դրսևորումներով, հասկանալ այն և չդատապարտել: Սիրել կյանքը նշանակում է ընդունել ոչ միայն ուրախությունն ու երջանկությունը, այլ նաև վիշտը, ցավը և տառապանքը, քանզի դրանք նույնպէս այդ կյանքի մասն են: Սիրել աշխարհը նշանակում է գիտակցության մեջ տեղավորել և՛ բարիքը, և՛ չարիքը, ձգտել բարուն և լույսին, ցանել շուրջը գեղեցիկը և հավերժականը»²⁰: Հետևելով Կենդանի բարոյագիտության այս խրատներին՝ մարդը կատարելագործվում է, ճանաչում ճշմարտությունը և իմաստնանում:

Ճշմարտության կողմերից մեկն է ոգու նուրբ աշխարհների հետ գիտակցության կապի ապահովումը, ինչի համար մարդուն նուրբ եռանդուծագործությունից գիտելիքներ են պետք. «Երբ մենք ասում ենք ճշմարտություն, մենք կանչում ենք դէպի նուրբ եռանդուծերի տիրապետումը»²¹: Սրտի գիտելիքի և խելքի գիտելիքի միջև կապի բացակայության հետևանքը լինում է տգիտությունը: Ոգեղեն սիրտը ճշմարտության մենաստանն է: Սրտի գիտելիքը Կենդանի բարոյագիտությունում ընկալվում է որպէս զգացիմացություն, ներզգայություն, որը կապում է մարդուն բարձրագույն աշխարհի հետ: Ուժեղ ներզգայության ամկայությունը վկայում է մարդու ոգեղենության բարձր մակարդակի մասին: Ներզգայության չզարգացածությունը մարդուն ստիպում է հույսը դնել դատողական խելքի վրա, որը մտածում է երկրային

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆԴԱՆԻ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
Ե (ԺԵ) ԳԱՐԻ, ԹԻՎ 4 (44) ԽՈԼՈՐԴԱՆԵՐ-ՐԵԼԻԳԻՆԵՐԸ, 2013

19 Крашкіна Л. И. Категория добра и зла в книгах Живой этики. – М.: Электронная библиотека международного центра Рерихов. – <http://lib.icr.su/node/1272> . – 14.07.2013 г., с. 2.

20 Նույն տեղում, էջ 4:

21 Ազնի Յոզա: Անսահմանություն. մաս 2–րդ, նշվ. աշխ., հատված 727:

ակնհայտության հասկացություններով: Դատողությունը հավակնում է ինքնաբավության, ուստի ճշմարտության լույսը նրան անհասանելի է: Ըստ Կենդանի բարոյագիտության ուսմունքի՝ «տգիտության պատճառը մարդու կտրվածությունն է բնությունից: Նման մարդը չի գիտակցում իր տգիտությունը և ապրում է չարիքի մեջ»²²:

Իսկ ճշմարտության ձգտողի որոնումները նրան ավելի ու ավելի են կապում բնությանը, նրա կազմակերպվածությանը և կարգավորվածությանը, ներդաշնակության ակնհայտությանը: Հետևելով բնությանը և սովորելով նրանից՝ մարդը բացահայտում է նրա իմաստության պատճառները, որոնք այն կառավարող օրենքներն են: Կատարելով բնության՝ կյանքի օրենքները, մարդը ձեռք է բերում նույն իմաստությունը, որը և կառավարում է բնությանը. «Տիեզերական ճշմարտությունն արտահայտվում է օրենքի տեսքով: Եվ որքան բարձր է օրենքը, այնքան այն ավելի տիեզերական է և համընդգրկուն: Կան օրենքներ, որոնք վերաբերում են լոկ Երկրին, կամ մեր Արեգակնային համակարգին, կամ գալակտիկային, կամ տիեզերքին»²³:

Կյանքի բազմազանությունը թելադրում է նաև օրենքների բազմազանություն: Յուրացնելով ճշմարտության մի մակարդակ՝ որոնողի զարմացած հայացքի առջև նոր, ավելի մեծ աշխարհի օրենքների բազմազանություն է հառնում: Հայտնի երևույթի նմանությամբ, որն է հարցի պատասխանը գտնողի առջև ավելի շատ հարցեր են վեր բարձրանում. «Նախանյութի արտահայտման ձևերն ու նրա կյանքը տարբեր մոլորակների վրա տարբեր են: Ժամանակի հաշվարկները նույնպես պայմանական են: Նույն պայմանականությունն է առկա նաև ապարային, բուսական, կենդանական և մարդկային աշխարհների կյանքի ձևերում: Որքան ավելի նյութական է արտահայտման ոլորտը, այնքան ավելի շատ են տարբերությունները, և որքան ավելի բարձր և ոգեղեն է ոլորտը, այնքան ավելի քիչ ու թույլ են տարբերությունները, մինչև որ հրեղեն աշխարհում դրանք վերանում են լրիվ»²⁴:

Ավելի ցածր աշխարհների հարաբերական ճշմարտություններից բարձր գտնվող յուրաքանչյուր նոր մակարդակի ճշմարտություն բացարձակ է դառնում նախորդների համար: Կյանքը ճշմարտության բացահայտումների շարան է դառնում բարձրացողի համար: Եվ այդպես շարունակվում է մինչև ճշմարտության լեռան գագաթը, որտեղ բոլոր հարաբերական ճշմարտությունները մեկ միասնական՝ բացարձակ ճշմարտության մեջ են. «Ոգում ամեն ինչ միասնական է: Հուրը մեծ միավորիչ է, միավորումը միայն բարձրագույնի մեջ է: Նախանյութի աշխարհը նման է բուրգի հիմքին. անկյունների կետերը հեռու են իրարից, բայց գագաթը պսակող բարձրագույն կետում ամեն ինչ ձուլվում է միասնության մեջ: Հրեղեն աշխարհում տարածություններ չկան: Բարձրագույն կետում միահյուսված է անջատ թվացող ամեն ինչը: Ոգին գոյը միավորողն է: Ամեն ինչի լուծումը վերևում է: Որքան գագաթին ավելի մոտ է ճշմարտության արտահայտման

22 Крашкіна Л. И., указ. соч., с. 3.

23 Грани Агни Йоги, 1953 г., Ч. I. 39.

24 Նույն տեղում:

ձևը, այնքան այն ավելի հաստատ է և երկարակյաց»²⁵:

Սույն ձմարտության իմացությունն ապահովում է նրա կիրառելիությունը ներկա կյանքում: Ցանկացած հարցում, եթե կան իրար հակառակ կարծիքներ, ձմարտությունը գտնելու համար պետք է վեր կանգնել հակադիր տեսակետների մակարդակից և ավելի բարձրում միավորել դրանք մեկ ամբողջության մեջ. «Երկու կարծիքները միևնույն իրի մասին կարող են տրամագծորեն հակադիր լինել երկու դիտարկող գիտակցությունների մոտ: Ձմարտությունն ավելի բարձր է: Այն երևույթների բևեռայնության վերևում է: Այն տեսնում է երևույթն իր ամբողջության մեջ, ոչ թե լոկ մեկ բևեռը: Դա կոչվում է համադրող հասկացողություն: Բայց միայն տիեզերական գիտակցությունն է որսում երևույթների ընդհանուր պատկերն իրենց իրար հետ անքակտելի փոխկապակցության մեջ, երբ անցյալը, ներկան և ապագան դառնում են մեկ: Ամեն ինչը միասնական է կյանքի բարձրագույն հասկացման մեջ, և միայն անձնականից հրաժարումը կարող է մերձեցնել ոգուն անանձնական իրականության հասկացմանը»²⁶:

2. Իմաստության մասին ուսմունքը

Ձմարտության որոնումները հանգեցնում են իմաստության ձեռքբերմանը: Ժամանակի որևէ կետում հնարավոր չէ պնդել, թե ձմարտությունն արդեն նվաճված է, քանի որ չկան ձմարտության չափանիշներն ու չափման միավորները համեմատելու, հաշվարկելու հնարավորությունները: Սակայն իմաստության կայացումն ակնհայտ է դառնում շրջապատի գիտակցությունների հետ համեմատության միջոցով: Իմաստունը դեռևս ձեռք չի բերել ամբողջ ձմարտությունը, բայց նա ավելի շատ ձմարտություններ ունի, քան մյուսները, նա ավելի հարուստ է դրանցով:

Ռուս մեծ գրող **Լև Տոլստոյը** իմաստություն էր համարում հավերժական ձմարտությունների գիտելիքը, որոնք կիրառվում են կյանքում:

Մեկ այլ ռուս գրող՝ **Իվան Գոնչարովը**, համարում էր, որ իմաստությունը խելքով, դիտարկումով և փորձով ձեռք բերված և կյանքի բերող ձմարտությունների ամբողջությունն է, դա գաղափարների ներդաշնակությունն է կյանքի հետ:

Ըստ **Լեոնարդո դա Վինչիի**՝ իմաստությունը փորձի դուստրն է:

Քանի որ իմաստասիրությունը նշանակում է իմաստության սեր, թվում է, թե իմաստասիրությունը պետք է որ վաղուց պատասխանած լինե՞ր այն հարցին, թե ի՞նչ է իմաստությունը: Նրանում իմաստության հասկացությունը պետք է իրավամբ կենտրոնական տեղ զբաղեցներ: Ավանդ, իմաստասիրությունում այդ հասկացությունը գործնականում չի օգտագործվում: Յուրաքանչյուր իմաստասեր օգտագործում է «իմաստություն» բառը, բայց միայն որպես բառ և այն նշանակությամբ, որն ինքը կորոշի տալ նրան իր շարադրանքում: Որպես հասկացություն՝ իմաստության միասնական մեկնաբանություն պարզապես գոյություն չունի իմաստասիրությունում: Այդ հասկացությունը սահմանելու զանազան իմաստասերների

²⁵ Նույն տեղում:

²⁶ Грани Агни Йоги, 1957, 147.

փորձերն այնքան են տարբերվում իրարից, որ հիմնահարցի գոյության լավագույն ապացույցն են հանդիսանում: Ավելին՝ այդ սահմանումները տրվում են ոչ թե իմաստության հարցի անմիջական դիտարկման առումով, այլ ուրիշ հիմնահարցերի դիտարկման ընթացքում: Ըստ փիլիսոփա Յ. Ի. Դոնցովի՝ «Առավել հանգամանալից այդ երևույթը բացահայտել է միայն իմաստասեր Լ. Ն. Ստոլովիչը իր «Իմաստությունը և գիտելիքը» հոդվածում: Դա գործնականում միակ հոդվածն է՝ լրիվ նվիրված իմաստությանը»²⁷:

Գոյություն ունեն իմաստության այնքան սահմանումներ, որքան կան դրա որոնողներ, քանի որ յուրաքանչյուրը յուրովի է տեսնում, հասկանում և պատկերացնում կյանքը և նրա իմաստությունը: Ահա դրանցից մի քանիսը. «Ճշմարտությանը համապատասխանող ցանկացած խոսք իմաստություն է», «Ճիշտ գործողությունն ծնող ամեն ճիշտ խոսք իմաստություն է», «Իմաստությունը գիտելիքին կատարելապես տիրապետելն է և գործողությունների կատարումը դրան համապատասխան», «Իմաստություն ունեցողն առանձնանում է ողջամտությամբ, չափավոր եռանդունով ու բարքով, էությունը հասկանալու և ճշմարտությանը ենթարկվելու ընդունակությամբ», «Իմաստությունն ու բարիքը կապված են միմյանց, որովհետև իմաստությունը ճիշտ պատկերացումներ է ներառում խոսքերի ողջամտության և արարքների խելամտության մասին»²⁸:

Արևելյան մտածելակերպը նույնպես իմաստությունը ճանաչում է մարդու վարքից: Արևելյան իմաստությունը սովորեցնում է. «Եթե խոսելու անհրաժեշտություն չկա, լռիր, եթե ստիպված ես խոսելու, գոնե մի դատիր, եթե ստիպված ես դատելու, գոնե մի վիճիր»²⁹:

Ըստ «Ռուսաց լեզվի բացատրական բառարանի»՝ «իմաստությունը կենսափորձի վրա հենված խորաթափանց խելքն է»³⁰: Ըստ «Մանկավարժական հանրագիտարանային բառարանի»՝ «իմաստություն հասկացությունը ցույց է տալիս ոչ միայն հոգու և խելքի ենթակայական վիճակը, այլև առարկայական դրությունը՝ նրանց կատարելությունը, գեղեցկությունը, ներդաշնակությունը: Իմաստությունը հասկացվում է որպես ճշմարտության մարմնավորումը կյանքում, ինչը սահմանում է կատարելապես վերափոխված իրականության և կենսականորեն մարմնավորված կատարելության վիճակը: Նման ոգեղեն վիճակն իրացվում է իմաստունի կենսակերպում, որը փորձում է կյանքի բարոյական ստեղծագործության և իմաստուն վերափոխման միջոցով հասնել միավորման Բացարձակի հետ:

Իմաստության ամբողջականությունն արտահայտվում է երեք կողմերի միասնականությամբ՝ **ճանաչողական, հաղորդակցական և բարոյական: Գործնական կողմը** ապահովում է իմաստունի կապն անդրիմացական

27 Донцов Я.И. Мудрость в контексте европейской культуры.–2006.–<http://www.politosophy.ru/glossary/mudrost/>.–20.07.2013 г., с. 1.

28 Доктор Салих бин Абдуллах бин Хамид, Определение мудрости. – <http://www.politosophy.ru/glossary/mudrost/>.– <http://www.religia.kz/2009-01-06-05-37-02/99-2009-01-21-11-04-50/766-2009-02-03-7-07-22.html>. – 20.07.2013 г., с. 1.

29 Фалёв Е. В. Принцип вмещения противоположений в буддийской философии и в Живой этике. – Журнал «Восход», № 11–12 (187–188), Ноябрь–декабрь, 2009 г., с. 2.

30 Толковый словарь русского языка (Сост. С.И. Ожегов и Н.Ю. Шведова). М., 1992, с. 100.

աշխարհի, բացարձակ գիտելիքի ակունքի հետ: Հաղորդակցական կողմն ապահովում է իմաստունի կապն ուրիշ մարդկանց հետ, շփումը նրանց հետ: Բարոյական կողմն ապահովում է իմաստունի վերաբերմունքը իր ոգեղեն աշխարհին, ինչն արտահայտվում է ոգու ճգնավորական մաքրագործմամբ, ինքնահրաժարմամբ և բարոյական կատարելության ձգտումով»³¹:

Ըստ «Փիլիսոփայական բառարանի»՝ «իմաստությունը մարդու բարձրագույն ոգեղեն կարողությունն է, որը համադրում է իմացության և աշխարհին մարդու աշխույժ վերաբերմունքի բոլոր տեսակները: Հնում իմաստունի երազանքը հայեցողականությունն էր, խաղաղաշուտում դիտող լինելը, որտեղ ուրիշները մրցում են կամ առևտուր անում: Իմաստունը կյանքի ուսուցիչն է, նրա վերափոխիչը»³²: Ըստ «Համառոտ փիլիսոփայական հանրագիտարանի»՝ «իմաստությունը արժեքավորության զգացման ներթափանցումն է կյանքի մեջ, իրերի ցանկացած զգացման մեջ, ամեն գործողության մեջ և արձագանքումը ընդհուպ ինքնաբուխ գնահատումը, որն ուղեկցում է յուրաքանչյուր վերապրումին: Իմաստությունը ըմբռնում է ամենայն իրապես բարոյական կեցության այդ կեցության տեսակետից: Իմաստությունը գործնական գիտակցության կապն է արժեքավորության հետ, որը միշտ ընկած է այդ գիտակցական գործողության կերպի հիմքում: Իմաստությունը բարոյական ոգեղենությունն է, բարոյագիտության գերիշխող դրույթը՝ որպես հիմնական ոգեղեն գործոն մարդկության ամբողջ կյանքում»³³:

Պատահական չէ, որ իմաստասիրությունում և կոնկրետ գիտություններում իմաստության ըմբռնման բազմազանություն է, չկա միասնական տեսակետ այն մասին, թե ինչ է իմաստությունը: Իմաստությունը չի կարելի հասկանալ ոչ գիտական, ոչ իմաստասիրական եղանակներով: Այն գտնվում է մարդկային հասկացողության սահմաններից դուրս: Դա է նրա գլխավոր գաղտնիքը: Իմաստուն լինելը մարդիկ հասկանում են ներզգայորեն, ենթագիտակցորեն. «Իմաստության տեսքով մարդկանց հետ խոսում է նրանց վերգիտակցականը, բարձրագույն բնությունը, անդրիմացականը: Անդրիմացականը խելքով հասկանալը մատչելի չէ մարդուն: Այն կարելի է հասկանալ միայն պայծառացման պահերին»³⁴: Սույն պնդմանը համահունչ է Կենդանի բարոյագիտության հեղինակների միտքը. «Որտեղից են մեր փորձառությունների ուժերը: Արեգակնային գիտակցությունից, որը թափվում է կենսաուժի տեսքով: Երկրային շերտավորումների մտքերի վրայով հոսում են Արեգակի իմաստության հոսանքները, և այդ սահմաններում է սկսվում պատվիրված մեծ ուսմունքը: Կանչում ենք աշխարհը գրկելու»³⁵:

31 Педагогический энциклопедический словарь / гл. ред. Б. М. Бим-Бад. – М.: Дрофа: Бол. рос. энцикл., 2008. – 528 с.

32 Философский словарь / Под ред. И. Т. Фролова. – 7-е изд., перераб. и доп. – М., «Республика», 2001. с 500.

33 Краткая философская энциклопедия. – М., Издательская группа «Прогресс» – «Энциклопедия», 1994, с. 259.

34 Донцов Я. И., указ. соч., с. 4.

35 Մորիայի պարտեզի տերևները. պայծառացում, Եր, «Յոթնագիր», 1999, հատված 2.2.2.9:

Ըստ Կենդանի բարոյագիտության՝ մարդը համարվում է միլիոնավոր տարիների ընթացքում տարբեր անձնավորությունների մեջ բազմաթիվ վերամարմնավորումների միջոցով երկարատև բնափոխական զարգացման արդյունք։ Այդ չգիտակցվող տեղեկատվության հսկայական քանակի շերտավորումները մարդու ոգու խորքերում կազմավորում են **«քնած իմաստություն»**։ «Քնած իմաստություն է կոչվում շատ կյանքերի ընթացքում գիտակցության խորքում դարսված դիտարկումների շերտավորումը... Ոգեղեն ճանապարհորդությունների միջև մարդը կուտակում է իր բեռը, որը պահպանում է իր գիտակցության մեջ։ Ուսանելի է, ինչպես են մանուկ տարիքում արդեն դրսևորվում տեղեկությունները և հակումները, որոնք չի կարելի բացատրել ոչ մի ուրիշ պատճառներով, բացի նախկին կուտակումների»³⁶։

Բուդդայական իմաստությունն ասում է. «Եթե ուզում ես ազատվել սեփական ստվերից, կանգնիր դեմքով դեպի արևը»։ Եթե սեփական մարմնի առաջացրած մթությունը չտեսնելու համար անհրաժեշտ է շրջվել դեմքով դեպի լույսի աղբյուրը, ուրեմն կյանքի անմտությունից ազատվելու համար անհրաժեշտ է թեքվել դեմքով դեպի իմաստության աղբյուրը։ Իսկ իմաստության աղբյուրը նախասկզբնական եռանդուժն է. «Կարող է երբեմն թվալ, թե ազատ կամքը գործում է անկասելիորեն, բայց կամքի ամենասարսափելի լարման վրայից հանդես է գալիս ումն ուժ, որը կատարելապես վերափոխում է կամային ազդակները։ Բանականության ցանկությանը հակառակ, կյանքի ճոճանակը այլ անխափա լուծում է ցույց տալիս։ Ցուրաքանչյուր բարեխիղճ դիտորդ կարող է հաստատել, որ իր միտքը չունի որոշիչ նշանակություն։ Կենցաղային փորձի վրա հիմնված կամքի վրայից հանդես է գալիս գիտակցության խորքերում թաքնված այլ խորին իմաստություն։ Եթե մարդը հպվում է Բարձրագույն աշխարհին, ապա այդ հպումը կատարվում է ոչ թե կամքի լարման ասպարեզում, այլ հենց գիտակցության խորքերի ուղիով, որտեղ խտանում է մաքուր համասկզբնական եռանդուժը...»³⁷։ Դեպի վերջինիս ճանաչումը տանող ուղին իր մեջ ունի տիեզերական իրականության իմաստասիրությունը՝ Կենդանի բարոյագիտության ուսմունքը։

3. Խելքի և իմաստության հարաբերակցությունը

Ըստ Կենդանի բարոյագիտության՝ մարդն ունի գիտակցություն և գեր-գիտակցություն, որն այլ կերպ անվանվում է նաև **ներզգայություն** կամ **զգացիմացություն**։ Զգացիմացության հիմքում ընկած են անհատի նախկին մարմնավորումների փորձը և ստեղծագործական կուտակումները։ Դրանք վերածվում են իմացական և ստեղծագործական ընդունակությունների, կարողությունների, հմտությունների ու գիտելիքների և պահպանվում են մարդու անմահ մասում՝ ոգում։ Մարդկային մարմնում նրա գտնվելու վայրը կոչվում է **գավաթ**։ «Եթե գավաթի կենտրոնը բաց է,

36 Ազնի Յոգա։ Եղբայրություն, մաս 1-ին, նշվ. աշխ., հատված 152։

37 Ազնի Յոգա։ Եղբայրություն, մաս 2-րդ։ Վերերկրային, մաս 1-ին, Եր., Հեղինակային հրատարակություն, 2009, հատված 270։

մարդը ձեռք է բերում բարձրագույն իմաստություն, որը գտնվում է հենց իր մեջ: Իմաստությունը գալիս է նրա մոտ ոչ թե մտահանգումների կամ տրամաբանական դատողությունների ուղիով, այլ գավաթի կենտրոնից՝ որպես անխախտ ճշմարտություն և զգացիմացություն...»³⁸: Այդպիսով՝ զգացիմացությունը մարդու ձեռք բերած իմաստությունն է, սեփական ջանքերով ու փորձառությամբ ձեռք բերածը: Իսկ երբ բացվում է գավաթը, նա կապ է հաստատում բարձրագույն իմաստության հետ: Իսկ գավաթը բացվում է այն ժամանակ, երբ զգացիմացության քանակական կուտակումները հանգեցնում են որակական նոր մակարդակի:

Հենվելով Կենդանի բարոյագիտության այն պնդման վրա, թե «խելքը իմաստությունը չէ, զգացիմացությունն է իմաստությունը, խելքը դատողությունն է»³⁹, իմաստասիրության դոկտոր **Ն. Ե. Մամոխիան** համարում է, որ «մարդու բարձրագույն ստեղծագործական ընդունակությունները կապված են ոչ թե խելքի հետ, այլ ոգեղեն սկզբի, այսինքն՝ զգացիմացության»⁴⁰: Դրանով նա կարծես հակադրության մեջ է դնում խելքը իմաստության կամ զգացիմացության հետ: Սակայն արդյո՞ք ճիշտ է խելքը և զգացիմացությունն իրար հակադրելը: Ամեն մարդու ենթագիտակցությունն է ղեկավարում, իր զգացիմացությունը: Յուրաքանչյուր մարդ կարող է խելացի լինել իր զգացիմացության մակարդակի բարձրության չափով, ոչ ավել: Խելացի մարդը հենց նա է, որն իր կյանքի, փորձառության, դաստիարակության միջոցով կարողացել է ավելի մեծ զգացիմացություն կուտակել, որն էլ ղեկավարում է իրեն, մեծ թե փոքր խելք է տալիս իրեն: Իսկ իմաստունն իր բարոյական ոգեղենության շնորհիվ կարողացել է սերտ կապ ապահովել իր ոգում եղած ավելի բարձր աշխարհի էության իմաստության հետ: Մարդու մտեղեն մարմնի վրա կան բոլոր աշխարհների հետ կապի հանգույցները, կամ մարդն ունի համապատասխան աշխարհների մարմինները: **Ներքևից վերև հաշվելիս բանականությունը դրանցից չորրորդում է, խելքը՝ հինգերորդում, իսկ իմաստությունը՝ վեցերորդում: Այնինչ ամենավերևում դեռ յոթերորդն էլ կա:** Ըստ այդմ խելքը կարծես միջին օդակ լինի բանականության և իմաստության միջև: Միայն դատողություն ունեցող մարդու մասին չեն ասում, թե նա խելացի է, իսկ խելացի են համարում նրան, որն իմաստության հետ կապի նախադրյալներ ունի արդեն, այսինքն՝ ավելի է մոտեցել իմաստությանը, քան դեռևս անխելքը:

Բացի այդ, քանի որ իմաստությունը ոգու մեջ է, խելքը իմաստությամբ հակադրողները նկատի ունեն իմաստության ոգեղենությունը, բարոյականությունը, քանզի խելք ունեցող մարդը կարող է լինել անբարոյական, ուստի և իմաստությունից հեռու, իսկ իմաստունը՝ չի կարող: Այստեղ մեր առջև համոնում է ոգեղեն, բարոյական հատկությունների չափելիության, գնահատման առարկայականության հարցը: Կարո՞ղ է արդյոք անխելք մարդն ավելի բարոյական լինել, քան խելոքը: Մարդն ավելի խելացի

38 Клизовский А. И. Основы миропонимания Новой эпохи. В 3 т. Т. 1., Рига, 1990, с. 77.

39 Ազնի յոգայի նշանները, Եր., «Լուսարաց-04», 1997, հատված 508:

40 Самохия Н. Е. Философское учение Агни Йоги: космос, человек, сознание. (Историко-философский анализ). Автореф. дис. на соиск. учен. степ. док. филос. наук. - М., 2008, с. 38.

է դառնում իր գործունեության արդյունքների շնորհիվ, գործունեությունը միշտ ենթադրում է ստեղծագործում, իսկ բարձրագույն ստեղծագործական ունակությունները գալիս են ոգուց, ենթագիտակցությունից, իմաստությունից: Օրինակ՝ հնդիկ իմաստուններից **Աուրոբինդո Գինշը**⁴¹ չի հակադրում իրար խելքն ու իմաստությունը, այլ կապում է իրար հետ, որպես մեկը մյուսի օգնական, ավելի ձիշտ՝ ավելի բարձրին ներկայացնելով որպես ավելի ցածրի օգնական. «Համարվում է, թե խելքը մարդու բարձրագույն գործիքն է: Բայց դա ձիշտ չէ. խելքին կենսականորեն անհրաժեշտ է ներքին լույս, որն առաջնորդում, ստուգում և հսկում է նրան: Ինչ-որ բան կա բանականության վերևում, և այդ բանը պահանջվում է հայտնաբերել: Իսկ բանականությունը պետք է կատարի միայն միջնորդի դեր այդ ճշմարիտ գիտելիքի աղբյուրի գործողությունների համար (ընդգծումը մերն է – Գ. Խ.)»⁴²:

Այսինքն՝ պարզեցված ձևով, իմաստնաճանաչում մեխանիզմը հետևյալն է. մարդը քայլ է կատարում դեպի ոգեղեն և բարոյական գործերը, բացում է գավաթը և իմաստություն է ստանում: Զգացիմացությունը նրան դրդում է ավելի մեծ ոգեղեն գործունեության, ապահովելով ավելի ու ավելի սերտ կապ ոգու իմաստության հետ: Նա դառնում է ավելի խելացի, խելացի կյանքի արդյունքն էլ լինում է իմաստության որոշակի մակարդակի ձեռքբերումը: Եվ այսպես շարունակվում է անվերջ, մինչև տիեզերական իմաստության անսահմանությունը:

Ըստ Կենդանի բարոյագիտության՝ ի տարբերություն խելքի, զգացիմացությունը թույլ է տալիս մարդուն ճանաչել շրջապատող աշխարհը ոչ թե տրամաբանական վերլուծության ճանապարհով, այլ պայծառացման, ներզգայության, ուսումնասիրվող առարկայի էության մեջ ակնթարթային ներթափանցման ուղիով, նրա հետ կարծես ինքնանույնականացման միջոցով:

Եվրոպական իմաստասերներից **Անրի Բերգսոնը** նույնպես համարում էր, որ զգացիմացության գործողությունը նման է ակնթարթային բռնկման, որը թույլ է տալիս տեսնել ամեն ինչ լրիվ նոր լույսի տակ, իսկ զգացիմացության բնությունը ֆրանսիացի իմաստասերը սահմանում էր որպես «մտավոր համակրանքի տեսակ, որի միջոցով տեղափոխվում են առարկայի մեջ, որպեսզի ձուլվեն այն բանի հետ, որը նրանում միակն է և, հետևաբար, անարտահայտելի»⁴³: Բերգսոնը առանձնացնում էր ներզգայության մի քանի տարատեսակներ՝ համակրանքը, շփումը, միաձուլումը իրականությամբ:

Կենդանի բարոյագիտության հեղինակները համարում են, որ գիտության առաջընթացի մեջ մեծ դեր ունեն խաղալու և՛ ոգեղեն ներզգայությունը, և՛ խելքը: Նրանք չեն հակադրում դրանք իրար: Ոգեղեն ներզգայության հակադրությունը նրանք համարում են ոչ թե խելքը, այլ ոգեղենությունից զուրկ անիմաստ մտավարժանքները. «Չխառնենք խելքը պայ-

41 Հնդիկ իմաստասեր է, բանաստեղծ, Հնդկաստանի ազգային-ազատագրական շարժման կազմակերպիչ, ուսուցիչ և միավորիչ յոգայի հիմնադիր:

42 **Sri Aurobindo**. A Practical Guide to Integral Yoga: Extracts Compiled from the Writings of Sri Aurobindo and The Mother. Pondicherry, India: Sri Aurobindo Ashram, 1955, p. 241-242.

43 **Бергсон А.** Введение в метафизику // Бергсон. Собр. соч. в 5 т. Т. 5, СПб., 1913-1914, с. 6.

մանական մտավարժանքի հետ: Խելքը կտանի դեպի իմաստությունը, այլ կերպ ասած, դեպի սիրտը»⁴⁴:

Այսպիսով, կան գիտելիքի ստացման և պահպանման երեք տարբեր հասկացություններ, որոնք իրենցից հատկություններ են ներկայացնում, և որոնք մարդու մարմնում ունեն իրենց համապատասխան մարմնամասերն ու վայրերը՝ **միտքը, խելքը, իմաստությունը**: Տարբերությունը նրանց միջև ոգեղենությունն է, բարոյականության առկայությունը, եսասիրության բացակայությունը: Ըստ թվարկված հերթականության՝ ներքևից վերև բարձրանալիս ոգեղենությունը, բարոյականությունը ավելանում են, պակասում է եսասիրությունը:

Եվ Ե. Ի. Ռերիխը, և՛ Ա. Բերգսոնը ցավով են խոստովանում, որ «մարդկային քաղաքակրթությունը ներգգայությունը գրեթե լրիվ զոհաբերել է խելքին»⁴⁵: Դա նշանակում է, որ մարդկության գիտնական մասը չի ընդունում ներգգայության հիման վրա կատարված հայտնագործություններն ու բացահայտումները, և ճշմարտությունների դուրսբերումները: Միայն բանական խելքն է համարվում գիտելիքի հայտնաբերման գործիք և իմաստության աղբյուր, ինչը, ինչպես տեսանք վերոշարադրյալից, չի համապատասխանում իրականությանը, քանի որ ներգգայությունն է իմաստություն տալիս մարդուն:

Այլ է իմաստասիրությունում: Իմացաբանության մեջ խելքի նշանակությունը համարվում է նախանյութի ճանաչումը, իսկ ներգգայության գործառնությունը՝ անդրիմացական իրականության ճանաչումը: Մույն դրույթը նման է գաղտնի ուսմունքում Ե. Պ. Բլավատսկայայի⁴⁶ պնդմանը. «Բարձրագույն վերգիտակցության արքայությունը գերբնագիտությունն է, իսկ բնագիտությունը գիտակցության արքայությունն է, որն իրականացնում է մտածողությունը բնագիտության մեջ և նյութական իրերի մասին»⁴⁷:

Եվ Բլավատսկայայի աստվածիմաստությունը, և՛ Կենդանի բարոյագիտությունը ներգգայությունն ավելի բարձր են դասում խելքից, համարելով նրան առաջնորդող, ուղղություն տվող իմաստության հատկություն խելքի համար. «Լոկ բանականությունը, բարձրացած մինչև գերգգացական իմաստությունը, միայն ինքը կարող է տալ բանալին, որի միջոցով կարելի է բացահայտել խելքը»⁴⁸: Ներգգայությունը կարևոր նշանակություն ունի ստեղծագործական գործունեության համար: Այդ պատճառով ստեղծագործելը հատուկ է ոչ թե բոլոր մարդկանց, այլ ոգեղեն զարգացման բարձր մակարդակի հասածներին: Մեծ հոգիներն իրենց նամակներում պնդում են, որ նման մարդը «տեսնում, զգում և ապրում է բոլոր հիմնական ճշմարտությունների բուն ակունքի՝ բնության համաշխարհային ոգեղեն էության մեջ»⁴⁹: Դա այդպես է, որովհետև ոգեղեն զարգացածի բանական էությունը

44 Կենդանի էթիկայի ուսմունք: Միրտ, Եր., «Լուսաբաց» հրատարակչատուն, 2000, հատված 336:

45 Бергсон А. Творческая эволюция. М., 2001, с. 260.

46 Ռուս ազնվականուհի, գրականագետ, հրապարակախոս, ճանապարհորդ, գաղտնագետ, աստվածիմաստական ուղղության իմաստասեր, Աստվածիմաստական (թեոսոֆիական) ընկերության հիմնադիրը:

47 Блаватская Е. П. Тайная доктрина, т. 3, Новосибирск, 1993, с. 462.

48 Письма Махатм, письмо № 14. М., 2006, с. 91.

49 Մույն տեղում:

նը իր մեջ եղած իմաստության միջոցով ավելի սերտ կապ է հաստատել համաշխարհային ոգու հետ. «Մտածողը հիշատակում էր երկու էությունների մասին մարդու մեջ՝ բանականության և իմաստության»⁵⁰: Դրանցից առաջինը կարելի է համարել ցածրագույն բանականությունը, իսկ երկրորդը՝ բարձրագույնը: Համապատասխանաբար՝ առաջինը կարելի է համարել ցածրագույն իմաստությունը, իսկ երկրորդը՝ բարձրագույնը: «Խելքը բարձրագույն վերգիտակցությունը չէ, բարձրագույն բանականությունը իմաստությունն է, բազմամյա կուտակումների պտուղը»⁵¹:

Թեև դրանք երկուսն էլ մարդու մեջ են, սակայն նրանց ճանաչելու համար կամքի ազատություն է պետք, նախապաշարմունքներից, գերություններից ազատ կամք, ուսման ձգտում, ծշմարտության որոնումներ, դեպի իմաստությունը սլացք: Այս գործողությունների արդյունքը իրեն ուշացնել չի տա և իր հետ կրեթի հայտնաբերման երջանկությունը. «Որքան գեղեցիկ կարող է լինել շարժում ազատ կամքը, որը կտվորեցնի ճանաչել իմաստությունը, որին պետք չէ հակառակվել: Ճանաչելով գոյի բանականությունը, մարդը ճանաչում է և խորքերն իր միջի: Մարդը կտվորի հարգել իր մեջ ուժը, որը տանում է նրան դեպի լավագույն հետևանքները: Մարդկության երջանկությունն այն է, որ նա տիրապետում է նախասկզբնական եռանդուժին, իսկ դժբախտությունն այն է, որ այդ օրհնված ուժն ընդունված չէ և անհծված է»⁵²:

Սակայն իմաստություն ձեռք բերելու համար կա գլխավոր պայմանը՝ կապը զարգացման աստիճանով ավելի բարձրում գտնվող աստիճանապետի կամ նվիրապետի հետ: Իսկ դրանից առաջ, նախ՝ հասկանալ և ըմբռնել է պետք աշխարհի կազմակերպվածության գաղափարը և կազմակերպման, կառուցվածքի կարգը, ձևը, կազմությունը: «Չէ՞ որ չեն հասկանա մարդիկ բարձրագույն իմաստությունը, առանց հասկանալու ամենից առաջ Աստիճանաշխարհի օրենքը, այն, ինչի վրա պահվում է ամբողջ կյանքը, այն, ինչով առաջ է գնում աշխարհը, այն, ինչով կազմվում է զարգացումը, այն, ինչի վրա կազմվում են պատմության լավագույն աստիճանները և էջերը»⁵³:

4. Մարդու ինքնակատարելագործման մասին ուսմունքը

Ըստ Կենդանի բարոյագիտության՝ իմաստության նշաններից մեկը **ուրախությունն** է: Ուրախ մարդիկ ավելի իմաստուն են, քան տխուրները, որովհետև նրանք իրենց իմաստության շնորհիվ են հասել իրենց ուրախությանը. «Ուրախությունը հատուկ իմաստություն է: ...Իմաստուն մարդիկ երբեմն, վտանգի ժամին բացականչում էին՝ ուրախություն, ուրախություն... Նրանք գիտեին ուրախության գանձի մասին և կարծես ուզում էին փոխ վերցնել այնտեղից զգացմունքների բոցավառումները, որոնք անհրաժեշտ էին սխրանքի համար: ...Մենք չենք կարող հաճախ բառերով

50 Ազնի Յոզա: Եղբայրություն, մաս 2-րդ: Վերերկրային, մաս 1-ին, նշվ. աշխ., հատված 270:

51 Письма Елены Рерих, 1929-1938. В 2 т. Том 1, указ. соч., письмо от 24.06.35.

52 Ազնի Յոզա: Եղբայրություն, մաս 2-րդ: Վերերկրային, մաս 1-ին, նշվ. աշխ., հատված 270:

53 Հիերարխիա: Կենդանի էթիկայի ուսմունք, Եր., «Լուսաբաց», 2000, հատված 414:

բացատրել, թե ինչից է առաջանում այդ ուրախությունը, նախակարապետը, բայց աստիճանաշխատության թեթևաթև ճառագայթի վրա այն այցելում է մեզ... Աձում են նաև սիրտը, գիտակցությունը և հրեղեն իմաստությունը»⁵⁴:

Ուրախությունն առաջանում է Բացարձակի հետ կապի մեջ մտնելուց. «Իմաստության բուն էությունը պարունակվում է Անէության մեջ, ասում են կաթալիստները: Միասնական իմաստությունը ձայնի մեջ է, ասում են գաղտնապաշտները: Խորհրդավոր իմաստությունը բոլոր սկզբունքների սկզբունքն է, Բարձրալից եղած ամեն ինչի պսակը»⁵⁵: Իսկ Բացարձակի հետ կապվելու համար պետք չէ հեռու գնալ, այն արդեն մարդու մեջ է: Գոյություն ունեցող ամեն ինչը, սկսած հյուլեից մինչև մարդը, բովանդակում է իր մեջ բոլոր երեք աշխարհների տարրերը, հոծ նյութի աշխարհի, նուրբ աշխարհի, հրեղեն աշխարհի: Անհրաժեշտ է միայն նկատել նրան, ուսումնասիրել և ծանաչել, ծանաչելուց հետո էլ մշտապես կապված մնալ նրան: Դրա համար իմացության մշտական գործընթաց է պետք, իրականության հետազոտում և ծանաչում, ճշմարտությունների մշտական բացահայտում: Ըստ Կենդանի բարոյագիտության ուսմունքի՝ մարդու կյանքի իմաստը բնափոխության անվերջ գործընթացն է, իր անսահման, աներևակայելի հնարավորությունների բացահայտումը, որոնք մարդու մեջ դրված են բնության կողմից, տիեզերքի գաղտնիքների և իր ներքին աշխարհի գաղտնիքների անվերջ ծանաչողությունը:

Ծանաչողության ուղիներից մեկը ցույց է տալիս **Ե. Ի. Ռեբիխը**. «Իրականության ծանաչումը ձեռք է բերվում միայն հակադրությունների զույգերի հավերժական հերթափոխման և համեմատման ծանապարհով»⁵⁶: Երկրնտրանքների կամ հակասությունների լուծումները չափի զգացում են պահանջում, որը հաստատորեն ցույց կտա ոսկե միջինի տեղը: Բայց այդ զգացումը կարող է հայտնվել և ճիշտ լինել միայն այն պայմանով, եթե երկու հակադրությունները ընդունված են գիտակցության մեջ: Որքան ավելի լիարժեք է գիտակցված հակադրություններից յուրաքանչյուրը, այնքան ավելի լիարժեք կլինի այդ գիտակցման մեջ ստացված համադրումը, այնքան ավելի ճշգրիտ կզգացվի հավասարակշռության գիծը, որն էլ կլինի որոնվող անհրաժեշտության թելը. «Հակադրությունների տեղավորումը անխզելիորեն կապված է արևելյան իմաստասիրության կարևորագույն սկզբունքներից մեկի հետ՝ «մի բացասիր»: Այդպես էլ Կենդանի բարոյագիտության ուսմունքում չբացասելը համարվում է ընդլայնված գիտակցության նշաններից մեկը»⁵⁷: Կյանքը մշտապես մարդկանց դնում է երկու բևեռների՝ ամենատարբեր հարցերի նկատմամբ ծայրահեղ տեսակետների միջև: Կիրառելով չբացասման սկզբունքը երկու բևեռային տեսակետների նկատմամբ, կարելի է հասնել բոլոր հակադրությունների տեղավորմանը: Հակադրությունների տեղավորումը անհրաժեշտ պայման է համարվում Կենդանի բարոյագիտության ուս-

54 Ազնի Յոզա: Հրեղեն աշխարհ, մաս 2-րդ., Եր., «Զանգակ-97», 2006, հատված 258:

55 Блаватская Е. П. Теософский словарь: [Пер. с англ.] / Е. П. Блаватская; [Предисл. Д. Н. Попова]. – [2-е изд., испр.]. – М., "Сфера", 1994, с. 116.

56 Рерих Е. И. Письма. Т. V. М., 2003, с. 141.

57 Фалёв Е. В., указ. соч., с. 2.

մունքի ճիշտ ընկալման և յուրաքանչյուր օրվա՝ կյանքում կենսագործման համար:

Ըստ Կենդանի բարոյագիտության՝ մարդը պետք է լուծի նուրբ և խիտ աշխարհների միջև կամրջի կառուցման խնդիրը, այդ կերպ մոտեցնելով նրանց: Դրանից հետո հնարավոր կլինի հաղորդակցությունը ոգու իմաստության հետ: Իր գոյության իմաստը հասկացած յուրաքանչյուր մարդ պետք է անմիջապես սկսի իր ինքնակատարելագործումը: **Լավագույնը, որ մարդը կարող է անել իր և հասարակության համար՝ իրեն ավելի լավը դարձնելն է:** Ահա թե ինչու Կենդանի բարոյագիտությունում մեծ ուշադրություն է դարձվում մարդու ներքին աշխատանքին իր վրա՝ ինքնակատարելագործմանը: Միակ հնարավոր ուղին մարդու և հասարակության ոգեղեն, բարոյական կատարելագործումն է: Ըստ Կենդանի բարոյագիտության ուսմունքի՝ **բարոյական սկզբունքներին հետևելը գլխավոր միջոցն է մարդու և մարդկության ոգեղեն և մարմնական զարգացման համար:**

Կենդանի բարոյագիտությունում մարդկանց տրվում են ակնարկները, դրվում են նշանոդերը, նշվում է տիեզերական զարգացման ուղղությունը. «Կենդանի բարոյագիտությունը անդրիմաստասիրություն է, քանզի հաստատում է ոգեղեն և նյութական, տեղեկատվական և եռանդուժային, կառուցվածքակազմիչ և ներշնչադարձելի գործընթացների վիճարկատային միասնությունը տիեզերքի միասնական զարգացող մարմնում»⁵⁸: Այն չի հակադրում անցյալի իմաստությունը ժամանակակից մտավոր կառուցումներին, գիտության տվյալները՝ իմաստասիրական մտահայեցությանը, անխուսափելի ենթակայական նախապաշարմունքները և մտածողի հրահանգները՝ հաստատում ու պարզ տեսական ապացույցին. «Կենդանի բարոյագիտությունը համաշխարհային իմաստության համաիշխանություն է, որը, ռուս իմաստասեր Պ. Ա. Ֆլորենսկու լեզվով ասած՝ հավաքում է միասնական ներդաշնակ փնջի մեջ հարյուրամյակների ճանապարհներին առատորեն շաղ տված մտքերի բոլոր ամենագեղեցիկ ծաղիկները»⁵⁹, – գրում է փիլիսոփայության դոկտոր Ա. Իվանովը:

Կենդանի բարոյագիտությունը իրավամբ կարող է կոչվել անդրիմաստասիրություն նաև այն պատճառով, որ նորից, **քաղաքակրթության կուտակած պատմական փորձի բարձունքից վերադարձնում է մարդուն այն հնագույն և հավերժական մարդաբանական ճշմարտությանը, որն ասում է, թե նա բացառապես երկրային, մարմնական և մահկանացու՝ վերջնական էակ չէ, այլ անվերջ և անմահ ստեղծագործ ոգի, կոչված ստեղծագործելու և խիզախելու տիեզերքի անսահման տարածություններում:** Կենդանի բարոյագիտության իմաստությունների ուսումնասիրությունները հետազոտողներին հանգեցնում են այն հետևությանը, որ **ոգու կյանքը հավերժական հաղթահարում է, հավերժական մագլցում և հավերժական տիեզերական ստեղծագործում:** Այդ հասարակ և խիստ հետևությունը բարձրագույն պահանջներ է ներկայացնում

58 Иванов А. В. Живая этика как метазнание // Материалы Международной научно-общественной конференции «В защиту имени и наследия Рерихов». – М.: МЦР, 2001, с. 8.

59 Նույն տեղում, էջ 9:

անձին և մղում նրան ազատ և պատասխանատու ինքնագիտակցման ուղիով: Կենդանի բարոյագիտության իմաստությունները վերադարձնում են ուսումնասիրողներին իմաստասիրության սկզբնական հասկացողությանը՝ որպես սեր դեպի իմաստությունը: «Կենդանի բարոյագիտությունը որպես սեր դեպի իմաստությունը և որպես իմաստուն սեր դեպի գոյություն ունեցող ամեն ինչը, որպես Աստծո բուն գերիմաստության լուր՝ ոչ մի վերջնական աշխարհայացքային և մեթոդաբանական բանաձևեր չի տալիս: Դա կհակասեր և՛ իսկական իմաստասիրմանը, և՛ մեծատառով ճշմարտությանը: Ուսմունքը լոկ գերբնական ուղենշաններ է տեղադրում և ներշնչում ինքնուրույն իմաստասիրական որոնում կատարելուն, նրբանկատորեն հուշելով, բայց ոչ մեկին չտանելով ձեռքը բռնած»⁶⁰:

Այսպիսով, Կենդանի բարոյագիտությունը ուսմունք է սիրո և իմաստության մասին, մարդկային սիրո՝ դեպի Բացարձակի իմաստությունը և Բացարձակի իմաստության սիրո՝ դեպի մարդը: Այս երևույթների փոխադարձ կապի և նույնության շնորհիվ կարելի է ասել, թե իմաստասիրությունը իմաստության սեր է կամ մարդկային սեր դեպի իմաստությունը, ինչպես նաև իմաստասիրությունը սիրո իմաստություն է՝ սերիմաստություն, կամ Բացարձակի սիրո իմաստություն, որին կապվում է մարդը և ունենում այն: Ըստ էության նույնն են իմաստության սերը և սիրո իմաստությունը, երկուսն էլ Բացարձակից են, նրա իմաստության սերը և նրա սիրո իմաստությունը: Կապվելով իր ոգում եղած Բացարձակին, ստանալով նրա սիրո իմաստությունը՝ սերիմաստությունը, մարդը ձեռք է բերում նաև իր սերը դեպի իմաստությունը կամ իմաստության սերը՝ իմաստասիրությունը:

Այդպես՝ իմաստությունն ու ճշմարտությունը միշտ միասին են: Մարդը կարող է իմաստություն գտնել ճշմարտության որոնումների ճանապարհին, կամ կարող է ճշմարտությունը հայտնաբերել՝ իմաստություն փնտրելիս: Ճշմարտությունը գիտելիք է, իսկ իմաստությունը՝ այդ գիտելիքն ունենալու հատկությունը: Ճշմարտության գիտելիքն իրեն դրսևորում է իմաստության հատկությունն ունեցող մարդու մեջ և դարձնում նրան իմաստուն: Տարբեր իմաստության աստիճաններ ունեցող մարդկանց մեջ հանդես եկող ճշմարտությունները Բացարձակ ճշմարտության արտահայտման աստիճաններն են: Դա բարձրագույն իմաստությունն է հանդես գալիս մարդկանց մեջ որպես բարձրագույն ճշմարտության դրսևորումների աստիճաններ: Իսկ ուսմունքի տեսքով ճշմարտության բարձրագույն դրսևորումը մարդկության զարգացման ներկա փուլում Մեծ ուսուցիչների ստեղծած ուսմունքն է՝ Կենդանի բարոյագիտությունը: Նրանում բարձրագույն իմաստությունը հանդես է գալիս որպես ճշմարտության բարձրագույն դրսևորում մարդու մեջ:

Ճշմարտության և իմաստության որոնումները, իմաստության նկատմամբ սերը կոչվում է իմաստասիրություն, որովհետև իմաստության որոնումը ճշմարտության բացահայտման նմանությամբ մշտական գործընթաց է: Եվ այդ գործընթացում Կենդանի բարոյագիտությունը հանդես է գալիս որպես ճշմարտության և իմաստության ավելի բարձր մակարդակ,

60 Նույն տեղում, էջ 10:

ճշմարտության և իմաստության զարգացման հաջորդ փուլի մասին իմաստասիրություն: Այն իրավամբ կարելի է անվանել տիեզերական ճշմարտության իմաստասիրություն, տիեզերական իմաստության իմաստասիրություն:

Եզրակացություններ

Ուսումնասիրության գլխավոր արդյունքները կարելի է ամփոփել հետևյալ հետևություններում:

Ճշմարտության որոնումները միասնական, բարձրագույն ճշմարտությունը գտնելու համար են: Դրա համար անհրաժեշտ է գիտակցության ընդարձակում և բարձրացում: Գիտակցության զարգացման հետ ընդարձակվում է նաև ճշմարտության հասկացողությունը: Մարդուն հասանելի է ճշմարտության այնպիսի բարձրություն, որքան որ նրա ոգու ճանաչողական ընդունակությունների բարձրության մակարդակն է:

Ճշմարտությունն արտահայտվում է օրենքի տեսքով: Ճշմարտությունը կեցության օրենքների իմացությունն է, իրականության արտացոլանքը գիտակցությունում: Կատարելով բնության՝ կյանքի օրենքները, մարդը ձեռք է բերում նույն իմաստությունը, որը և կառավարում է բնությանը:

Կենդանի բարոյագիտության ուսուցիչների բարձրագույն գիտակցությունը գիտի ճշմարտությունը և պատրաստ է հայտնել այդ ճշմարտությունը մարդկությանը, բայց դրա համար մարդկությունը պետք է բարձրանա զարգացման բարձրագույն աստիճանին:

Ճշմարտության հաստատման ուղիներից մեկն է գեղեցկությունը: Ճշմարտության հասկացությունը նույնական է բարության, գեղեցկության և սիրո հասկացությունների հետ: Մարդը տիրապետում է ճշմարտությանը և իմաստուն է այնքանով, որքանով կարողանում է սիրել, բարություն անել իր կյանքում, ընդունակ է հասկանալու գեղեցկությունը իր բոլոր դրսևորումներում և սովորել է վերարտադրել այն կյանքում:

Ճշմարտության կողմերից մյուսը ոգու նուրբ աշխարհների հետ գիտակցության կապի ստեղծումն է, ինչի համար մարդուն նուրբ եռանդութագործությունից գիտելիքներ են պետք: Մարդու մեջ ճշմարտությունն ապրում է սրտում: Սրտի գիտելիքը Կենդանի բարոյագիտությունում ընկալվում է որպես զգացիմացություն, ներզգայություն, որը կապում է մարդու գիտակցությունն ավելի բարձր աշխարհի հետ: Զգացիմացության հիմքում ընկած են անհատի նախկին մարմնավորումների փորձը և ստեղծագործական կուտակումները: Դրանք վերածվում են իմացական և ստեղծագործական ընդունակությունների, կարողությունների, հմտությունների և գիտելիքների և պահպանվում են մարդու անմահ մասում՝ ոգում: Զգացիմացությունը մարդու ձեռք բերած իմաստությունն է, սեփական ջանքերով ու փորձառությամբ ձեռք բերածը: Իսկ ավելի սերտ կապ հաստատելով իր ոգու միջուկի հետ՝ մարդը ձեռք է բերում նաև բարձրագույն իմաստությունը:

Միավորումը միայն բարձրագույնի մեջ է, ոգում ամեն ինչ միասնական է, հուրը մեծ միավորիչ է: Բարձրագույն, բացարձակ ճշմարտությունը

բարձրագույն աշխարհում է՝ ոգում:

Ճշմարտության որոնումները հանգեցնում են իմաստության ձեռքբերմանը: Կենդանի բարոյագիտությունը գիտի, թե ինչ է իմաստությունը: Իմաստությունը բարոյական ոգեղենությունն է: Իմաստունն իր բարոյական ոգեղենության շնորհիվ կարողացել է սերտ կապ հաստատել իր ոգում եղած ավելի բարձր աշխարհի էության իմաստության հետ: Բարձրագույն իմաստությունը նրանում հանդես է գալիս որպես ճշմարտության բարձրագույն դրսևորում:

Ըստ Կենդանի բարոյագիտության՝ մարդը պետք է լուծի խիտ և նուրբ աշխարհների միջև կամրջի կառուցման խնդիրը՝ այդ կերպ մոտեցնելով նրանց և ապահովելով հաղորդակցությունը ոգու իմաստության հետ:

Մարդու կյանքի իմաստը բնավոխության անվերջ գործընթացն է, իր անսահման հնարավորությունների բացահայտումը, որոնք մարդու մեջ դրված են բնության կողմից, տիեզերքի գաղտնիքների և իր ներքին աշխարհի գաղտնիքների անվերջ ճանաչողությունը: Յուրաքանչյուր մարդ պետք է անմիջապես սկսի իր ինքնակատարելագործումը: Ահա թե ինչու Կենդանի բարոյագիտությունում մեծ ուշադրություն է դարձվում մարդու ներքին աշխատանքին իր վրա՝ ինքնակատարելագործմանը: Ըստ Կենդանի բարոյագիտության ուսմունքի՝ բարոյական սկզբունքներին հետևելը գլխավոր միջոցն է մարդու և մարդկության ոգեղեն և մարմնական զարգացման համար:

Summary

WISDOM AS THE HIGHEST MANIFESTATION OF TRUTH

According to the doctrine of alive ethics

Gegham A. Khachatryan

The article presents the definitions of truth and wisdom given by philosophy and science. It analyzes the concept of truth. Presented perception and definition of truth and wisdom of the doctrine of Alive Ethics, understanding of the ways and conditions of their achievements, their characteristics and properties. According to the authors of the Alive Ethics, the acquisition of the truth and wisdom is necessary to develop consciousness, raising it to the level of acquisition of the intuition's highest degree. The doctrine draws a lot of attention on the inner workings of a person, self-improvement. The path leading to wisdom is the spiritual, moral perfection of man and society.

ՓԵԼԻՍՈՓՈՒՅՈՒՆ 2013
Ե (ժԵ) քառի, թիվ 4 (44) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2013
ՎԷՄ համահայկական հանդես